




## ՄԻ ՊՏՈՅՑ ԵՐԵՒԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Մենք մօտեցանք մը ինքնուս նկարիչի գործերին, Վ. Խօջաբեկեանի մատիտով նկարներին: Դու կը տեսնես ալստեղ, որ այս «Հասարակ» մարդու մէջ (նա կատապան էր, յետոյ դռնապան Թիֆլիսի մի կաֆէյում), այո՛, այս հաղուապիտ մարդու մէջ միացած են թէ՛ ստեղծագործութիւնը եւ թէ՛ կատարումը. ստեղծագործութիւն այն չափով, որ նա իր այս կոմպոզիցիաները յօրինել է շատ հանդիստ եւ անբռնադրօսիկ, որ նա իր բոլոր Փիկուրները նկարել է յիշողութեամբ, մոզել է ի ունեցել իր աչքի առաջ: Ես անձամբ ճանաչում էի այդ մարդուն, նա մեռաւ թշուառ դրութեան մէջ. տեսնո՞ւմ ես, ոչ գոյն, ոչ ստուերներ, այլ միայն դժեր, հասարակ թուղթ ու մատիտ, բայց որքա՞ն կենդանութիւն, ի՞նչ պիտի շարժում, Փիկուրների ի՞նչ պիտի դարձանայի կեցուածք եւ դասաւորութիւն:

— Ո՛րքան հետաքրքրական է:

— Այս մարդը կիսազրադէտ էր, հեռանկարի, անատոմիայի մասին ոչ լսել էր եւ ոչ կարդացել, բայց նայել թէ մի սխալ գտնես համաչափութեան կամ հեռանկարի մէջ. նկարել է այնպէս, ինքնազարդացմամբ, եւ ո՛րքան առատ նիւթ հին Թիֆլիսի ազգադրութեան եւ զգեստների ուսումնասիրութեան համար:

— Այս դարձանայի մարդը չի՞ փորձել գոյներով նկարել, եթէ ոչ ձիթաներկով, գոնէ ջրաներկով:

— Փորձել է, մեր նկարիչներէն մէկը, չեմ յիշում ով, խորհուրդ էր տուել նրան, որ նա նոյն նկարները փորձի նկարել ջրաներկով. փորձեց Խօջաբեկեանը, բայց բան դուրս չեկաւ:

— Ուրիշ նկարներ էլ թողե՞լ է այս նկարիչը, թէ միայն այս տասի չափ կտորներն են, որ ի ցոյց են դրուած:



— Ունի, ի՞նչպէս չէ. նրա գործերը բոլորն այս տեսակ են, եւ գրեթէ նոյն Փորձատուլ, որքան եւ տեսել եմ, կարող են հասնել մինչեւ 100ի. մեր թանգարանում կան եւ ուրիշները, որ չեն ցուցադրուած, կան եւ Թիֆլիսում, թէ՛ թանգարանում եւ թէ՛ մասնաւոր մարդկանց մօտ:

— Ի՞նչպէս է որ Խոջարեկեանի գործերը մի առանձին մոնոգրաֆիայով չեն հրատարակել: Ես ուրախութեամբ մի օրինակ կը տանէի ինձ հետ:

— Ֆրանչո, այդ մոնոգրաֆիան հրատարակուած է, բայց վաղուց սպառուած. սակայն այս գործերից մի քանիսը տպագրուած կան բացիկների վրայ. դու այժմ կարող ես նրանցից մի մի հատ վերցնել:

— Շատ ուրախ եմ, ես անպատճառ կը վերցնեմ ու կը տանեմ ցոյց տալու թէ աշխատաւոր ժողովրդի ծոցից ի՞նչպիսի տաղանդներ են դուրս գալիս:

— Ասացէք, խնդրեմ, զիմեց ինձ Բիանկին, երբ մենք արդէն թանգարանի զբաւեւնակումն էինք — ձեզ մօտ կազմակերպուած են կերպարուեստի ցուցահանդէսներ:

— Ի հարկէ, այլ կերպ ի՞նչպէս կարող էր լինել. մեր արուեստագէտներից շատերը մասնակցում են եւ համամիութենական ցուցահանդէսներին եւ Եւրոպայի միջազգային էքսպոզիցիաներին:

— Յաճախ են ձեզ մօտ կազմակերպուած այգւպիսի ցուցահանդէսներ:

— Այո՛, տարին մի, կամ մի քանի անգամ. Երեւանում ուրիշ յարմարաւոր սրահներ չունենալու պատճառով թանգարանի զիրեկցիան զլիսաւորապէս ինքն է կրում հէնց այս չէնքի մէջ ցուցահանդէսներ բանալու հոգւր: Ես Երեւանում եմ 25 թուից եւ որքան յիշում եմ մինչեւ այժմ այստեղ բացուել են 20ից աւելի ցուցահանդէսներ:

— Գնանք, սինեոր Ֆրանչեսկո, մեր գործը վերջացնելու:

— Այո, այո, պէտք չէ ժամանակ կորցնել:

Մենք գնում ենք յատկապէս նայելու զանազան սենեակներում բաժան — բաժան տեղաւորուած մեր սակաւաթիւ քանդակագործ ար-

ուեստագէտների գործերը, բայց ահա՛ ճանապարհին կանգ է առնում ընկերս եւ նայում է Յովնաթանեանների գործերին:

— Այս ի՞նչ հին նկարներ են, սիրելի Լ.:

— Հա՛, սրանք Յակոբ Յովնաթանեանի գործերն են: Յովնաթանեան նկարիչների ընտանիքը շատ մեծ էր, նրանց պապը, Նաղաշ Յովնաթանը որ եղել է եւ բանաստեղծ, ապրել է 17 — 18րդ դարերի փոխանցման շրջանում. նրա թոռը, նոյնպէս Յովնաթան, նկարագրող է էջմիածնի տաճարի ներքին որմերը, որոնց Փրպմենտներից կան թանգարանի հնագիտական բաժնում: Մօտիկ անցեալի հայ նկարիչներից ահա տեսէք հոչակաւոր ծովանկարիչ Յովհաննէս Այվազովսկու եւ Ստեփան Ներսէսեանի գործերը:

Բիանկին յափշտակութեամբ նայում է «Ծովի կախարդի» մեծ կտաւներին ու յատկապէս «Նիսպոլի ծովածոց»ին:


— Ես տեսել էի այս արուեստագէտի գործերը տպագրուած ալբոմների մէջ, այժմ արժանացայ տեսնելու եւ օրիգինալները:

— Ֆրանչեսկո, քանի որ դու ծովանկարներ սիրում ես, արի ես քեզ ցոյց տամ մեր միւս մարինիստների գործերը — մէկը Էմմա-նուէլ Մահտեսեանը, Այվազովսկու հայրենակիցը եւ արժանաւոր աշակերտը, միւսը Վարդան Մախոյսեանը. վերջինս աւելի ուժեղ է եւ աւելի համբաւաւոր. ափսո՛ս որ մեր այս նկարիչներից մենք մի մի գործ ունենք միայն մեր թանգարանում:

— Ասացէք, խնդրեմ, սինեոր Լ., ձեր նոր նկարիչներից կա՞ն այնպիսիները, որ ընտրած լինեն յատկապէս նկարչութեան այս ճիւղը:

— Այսինքն ծովանկարչութիւնը. ո՛չ պատճառը պարզ է. մենք ծով չունինք: Այվազովսկին եւ Մահտեսեանը Ղրիմում են ծնուել ու մեծացել. Մախոյսեանը՝ Տրապիզոնում: Հայաստանը, ինչպէս տեսաք, լեռնաշխարհ է, եւ մեր պէյզաժի մէջ էլ զերակշռում են լեռնային տեսարանները: Մեր նկարիչներն իրենց պէյզաժների մէջ շատ անգամ են պատկերել Սեւանի փերուզեայ հայելին, բայց ամենից շատը մեր յայտնի պէյզաժիստ Գէորգ Բաշինջաղեանը, որը իր օգտաւոր եւ գունաւոր նկար-





3. Այվագովսկի. — Ծովանկար

ներով անցեալ դարի երկրորդ կէսին մեծ ժողովրդականութիւն էր ձեռք բերել Կովկասում: Նա մեռաւ 1925 թ. երբ արդէն «Վաղուց հնացած» էր համարուած նրա արուեստը:

— Յամենայն դէպս դուք այստեղ շատ դժուար չունէք այդ արուեստագէտից:

— Այո՛, նրա նկարները մեծ մասամբ զրանում են Թիֆլիսում (ուր ապրում էր նկարիչը) եւ աւելի շատ գտնուում են մասնաւոր ձեռքերում:

— Չանցնենք քանդակագործութեան:

— Շուտով կ'անցնենք մնաց մեզ, սիրելի Ֆրանչո, որ քեզ ծանօթացնեմ մեր հին նկարիչներից եւ մի ուրիշին, որն անսպասան արժէքաւոր տեղ է զբաւում մեր արուեստի պատմութեան մէջ. դա նկարիչ Վարդգէս Սուրէնեանցն է. ահա քո առաջ նրա դժուարից մի շարք խոշոր ու մանր կտաւներ եւ ջրաներկ իլլւատրացիաներ: Նայիր տես, որ մենք դժուար ենք այստեղ մի նշանաւոր վարպետի հետ, բառի եւրոպական մտքով: Սուրէնեանը այն

հաղուադիւտ արուեստագէտներից է, որ չի կարուել դասական այն նկարչութեան տրագիգիաններից, ոչ թէ իր սիւսէներով միայն, այլ եւ տեխնիկայով, ձեւով եւ ոճով:

Ընկերս խորացած հայեացքով նայում է «Արա դեղեցիկ եւ Շամիրամ» պատկերին. նայում է «Անարդուած տաճար»ին:

— Գիտէ՛ք ինչ, այս նկարչի մօտ ես տեսնում եմ, որ Փօնին աքսեսուարին նոյնքան արժէքաւոր տեղ է տրուած, որքան եւ Փիդուրներին:

— Այո, բայց դու տեսնո՞ւմ ես որքան զսպուածութիւն, եւ մանաւանդ օղային հեռանկարի այնպիսի վարպետ արտայայտում, որ այդ Փօնն ու աքսեսուարը չեն աղագակում ու չեն դուրս ցցւում պատկերից, այլ լրացնում են պատկերի ամբողջութիւնը:

— Ի՞նչ սիրուն, ի՞նչ թախծոտ պատկեր է ներկայացնում այդ նկարը, նայելով Հոլիսիմի մէջի վանքի նկարին՝ ասում է հին վանքերի սովոր Խաւացին: — Ո՛րքան պարզ է ու թե-



թեւ այս ճարտարապետութիւնը եւ ո՛րքան ամփոփ իր միջնադարեան հողաշէն պարիսպներում :

— Այո՛, սիրելի Ֆրանչո, այս շէնքը Երզրարու հայ ճարտարապետութեան լուսավոյն կառուցուածքներից մէկն է . մեր պետութիւնը առանձին խնամք է տանում այսպիսի պատմական յուշարձանների պահպանութեան :

Այժմ մենք անցնենք դիտելու մեր քանդակապորձների աշխատանքները :

— Ասեմ քեզ, սիրելի Բիանկի, քանդակապորձութիւնը մեր ժամանակակից կերպարուեստների մէջ համեմատաբար աւելի աղքատ է, բայց քանակական աղքատութեան դիմաց՝ որակով այնպիսի արժէքաւոր պորձեր ունինք, որ կարող են շնչուել հիւրերի առաջ : Առաջաւոր քանդակապորձ վարպետներ ունինք, որ ապրում են արտասահմանում, Հայկ Բադիկեան՝ Ամերիկայում, եւ Յակոբ Գիւրջեան՝ Փարիզում՝ հուշակաւոր Ռոդէնի աշակերտը : Այս երկուսն էլ իրենց անուան շուրջը համբաւ ունին ստեղծած մեծ մասշտաբով : Մեր թանգարանում Բադիկեանի եւ ոչ մէկ պորձը չկայ դժբաղդարար, իսկ Գիւրջեանի պորձերից ահա մի քանիսը . վերջինս կովկասցի է, Դարբարազի Հայերից, ապրել ու պորձել է Մոսկուայում, Պետերբուրգում, ահա այդ չրջանի պորձերից նայիր Մաքսիմ Գորկու, Ֆեոդոր Շալեապինի բրոնզէ բիւստերին : Իսկ այս մարմարէ կանացի բիւստերի մէջ տես որքա՛ն շնորհալի, միեւնոյն ժամանակ որքա՛ն ինքնագոհ ու հպարտ պատկերացումներ ունին այս արիստոկրատ տիկիկները : Աւելի ուշ, Փարիզում եւ եղել եմ Գիւրջեանի արուեստանոցում . արուեստի մէջ աւելի առաջդիմած, բայց իւր սիւսէներին բնորութեամբ զրեթէ մնացած նոյնը : «Չեւով եւրոպական, բովանդակութեամբ բուրժուական», ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը մեզ համար ընդունելի չէ, նոյնն են եւ մեր գաղթահայ միւս արուեստագէտները : Մի էդդար Շահին, մի Փուշման, Շիշմանեան կամ Ջաքարեան, որքան էլ որ հայ նկարիչներ են իրենց խոշոր տաղանդով, բայց իրենց պորձերով՝ ձեւով ու բովանդակութեամբ հայ նկարչութեան պատմութեան մէջ հազիւ թէ տեղ ունենան, դուցէ՛ բացառութիւն է կազմում Ջաքել Պոյա-

ճեանը՝ Լոնդոնում, որի պորձերի մի մասը մէջ փայլում է ձեւով եւ բովանդակութեամբ ազգայինը :

— Արդեօք դուք շատ նեղ չէ՞ք գծադրում հայ նկարչութեան սահմանները :

— Գուցէ դո՛ւ ես այդպէս նեղ հասկանում . ընդհակառակը, արուեստը մեծ է, երբ ազգային ձեւի մէջ ուրոյն կերպարանք ունի : Եթէ ասում ենք իտալական նկարչութիւն, կամ ռուսական նկարչութիւն, իտալական կամ ռուսական երաժշտութիւն, մենք հասկանում ենք ազգային ձեւը, որի հետ եւ անբաժնելի է բովանդակութիւնը ժամանակի տիրող դասակարգի կնիքով : Եւրոպական մամուլը հիացած էր Ռուս Գեղարուեստական Թատրոնի բեմադրութեամբ եւ խաղով, ոչ թէ նրա համար որ այնտեղ աւելի վատ էին խաղում կամ բեմադրում, այլ նրա համար, որ «Չեխովի Թատրոնը» իր ազգային առանձին կերպարանքն ու բովանդակութիւնն ունէր եւ ինքնուրոյն էր : Բայց անցնենք դիտելու մեր տեղական քանդակապորձների աշխատանքները : Ամենից առաջ ասեմ քեզ, սիրելի Ֆրանչեսկո, որ նրանք բոլորն էլ զեւ երիտասարդ են եւ գտնուում են իրենց զարգացման չրջանում . ահա նրանցից ամենից յայտնին, Արայ Սարգսեանը . նա մի տասը տարի առաջ Հայաստան եկաւ Փարիզից, զեւ եւս դատանի, բայց խոստմնաւից ու աշխատասէր : Եթէ համեմատելու լինենք նրա սկզբնական տարիներու պորձերը վերջին աշխատանքների հետ, կը տեսնենք խոշոր առաջադիմութիւն իր արուեստի մէջ . միջին պորձերից են ահա այնտեղ ցուցադրած բիւստերը՝ ճարտարապետ Թորամանեանի եւ զրոյ Վ. Թոթովկնցի (չիլս) : Նրա մի յաջող պորձը՝ փողոցում, այս թանգարանի առջեւ կանդնեցրած, Սուր . Սպանդարեանի մարմարէ բիւստն է, իսկ վերջին տարիներում մեր արուեստագէտն աւելի մոնիւմենտալ աշխատանքներով է զբաղւում՝ ոճաւոր սելիէֆներով . ահա տես նրա «Միացեալ ճակատ»ը, «Շինարարութիւն»ը եւ «Միտինդ»ը . տեսնո՞ւմ ես ի՞նչպիսի շարժում, ի՞նչպիսի թափ է տուել երիտասարդ քանդակապորձը իր ոճաւորած Փիդուրներին : Ի՞նչ անենք, որ այդ Փիդուրները անատոմիայի որոշ թերութիւններ



ունին, իսկ աւելի ճոխ եւ աւելի բարդ կոմպոզիցիա ունի նրա մի նոր մոնիւմենտալ գործը Լենինականում, նրա վերջրած մեր յեղափոխութեան առաջին շրջանից:

— Ասացէ՛ք, խնդրեմ, այս քանդակագործը չի՞ փորձել տալ ամբողջական, տարածուն Ֆիգուրներ:

— Ինձ ծանօթ չէ: Թերեւս նա վաղաժամ է համարում բիւստերից եւ ուելիֆներից անցնելու ամբողջական Ֆիգուրներին: Բայց ահա մեր մի ուրիշ քանդակագործը՝ Սուրէն Ստեփանեանը. տեսնո՞ւմ ես, սա իր արուեստի մէջ բացի ուելիֆներից տուել է եւ Ֆիգուրալ գործեր. ահա «Կուլին», դէպի ազատութիւն ձրգտող այդ չինական «ստրուկ բանւորը». ահա եւ Ֆիգուրների մի հետաքրքիր խումբ, ի՞նչպէս ես գտնում այս գործերը:

— Միանգամայն գոհացուցիչ. ինձ թւում է, որ այս արուեստագէտն աւելի համարձակ

է եւ նրա դիպացողոնք աւելի է լայն, այնպէս չէ՞:

Համարձակութիւնը լաւ բան է առհասարակ, բայց համարձակութիւնը արուեստի մէջ պէտք է չափաւորուի արուեստագէտի ընդունակութիւնների սահմաններում. ներկայ դէպքում Ստեփանեանը պահել է այդ չափը եւ դա նրա առաւելութիւնն է:

— Իսկ ո՞ւմ աշխատանքն է, սինեոր Լ., այս կարմրաւուն ապառաժի վրայ քանդակած կնոջ գլուխը:

— Սա մեր քանդակագործուհի Ուրարտու Քոչարեանի գործն է. այս արուեստագէտը աշակերտուհին է եղել անուանի քանդակագործ Երզրայի, որ այժմ մեծ անուն ունի Հարաւային Ամերիկայում. նա ըստ էրեւոյթին իր սանին ներշնչել է զազափարնէրի հարստութիւն, համարձակ շտրիխներ, բայց այդ հարուստ զափարները համարձակ շտրիխներով պատկե-



Վարդան Ալիկեան — Աւան գիւղը



րելու համար երիտասարդ Քոչարեանին դեռ եւս պէտք է յամառ եւ խոկուն աշխատանք:

— Ուրիշ ի՞նչ գործ ունի այս արուեստագիտունին, ինչո՞ւ աշատեղ չկայ:

— Պէտք է ասեմ, Ֆրանչեսկո, որ նա շատ է խոտապահանջ դէպի ինքն իրեն, ամէն գործ չի ցուցադրում, մեր ցուցահանդէսներին մասնակցում է հազուադէպ. մինչդեռ նա ունի իր յատուկ արուեստանոցը, ուր կան շատ յաջող գործեր. նա նոյն իսկ անցեալում մասնակցեց Շահումեան յուշարձանի մրցութեան եւ նրա նախագիծը ստացաւ երկրորդ մրցանակը:

— Ինձ այնպէս է թւում, թէ նրան պէտք է աւելի առաջ քաշել, նրանով պէտք է զրադուել, կին արուեստագէտներ շատ չունիք ըստ երեւոյթին:


— Ճիշդ է, մենք գուցէ աւելի քիչ ենք զրադուել նրանով, քան պարտաւոր էինք զրադուել: Կին քանդակագործ ունինք եւ մի ուրիշին՝ նկարչուհի Ա. Սազիմեան, բայց նա թու-

ղել է այդ ճիւղը եւ անցել ուրիշ աշխատանքների, իսկ նկարչուհիներ ունինք երկուսը՝ Գուհարիկ Ֆերմանեան եւ Վ. Վարդպատրիկեան, միանգամայն տարբեր՝ արուեստի իրենց բմբրեման մէջ: Մինչ Ֆերմանեանը իր պորտրետներին եւ Փիդուրներին պատկերում է մոտումենտալ, ծանր, արձանային, լայն խոշոր վրձինաւորումով, Վարդպատրիկեանը սիրում է իր պէյզաժներին տալ թեթեւ օդեղէն եւ գունեղ կերպարանք:

Ուղեկիցս սովորական գտնելով վերջինիս գործերը, աչքերը չբռնում է Ֆերմանեանի գործերի վրայ:

— Ուրիշ քանդակագործներ չունի՞ք, սինեոր:

— Ունինք մի քանի նոր ուժեր, բայց նրանց մասին քիչ յետոյ. մենք նայենք այժմ մեր երիտասարդ զրաֆիկներին գործերին, ես յոյս ունեմ դու կը հաւանես. զրանցից առաջաւոր տեղ են բռնում Արարատ Ղարիբեանը եւ



Արայ Սարգսեան. — «Գրոհ»





Սուրէն Սպանդարեան, գործ՝ Արայ Սարգսեանի

Տաճարաւ իրաւականքեանը՝ Լենինգրադում եւ Մոսկուայում աւարտած իրենց մասնագիտական բարձրագոյն կրթութիւնը։ Նրանք վաղուց չէ որ վերադարձել են Հայաստան եւ այդ կաթամանակում պոլիգրաֆիական գեղարուեստական գործերը անհամեմատ աւելի բարձրացել են իրենց որակով։ Ղարիբեանն ունի յաջող պլակատներ, ունի քսիլոգրաֆիական խնամքով գործեր, ինչպէս եւ գրքաշապկների մի մեծ

շարան։ Բացի այդ, նա երկրի արդիւնաբերական կեանքից ունի մի շարք գրչանկարներ, որոնք տպագրուած են մեր ժուրնալներում։ Տ. Սաչվանքեանը գրաֆիկ-նկարիչ է եւ վարպետ լիտոգրաֆիստ միաթամանակ, նա մեծ ճաշակ ունի՝ իրեն յանձնարարուած իւրաքանչիւր գրքի շապկանկարը պատկերել համապատասխան ոճով եւ երանգաւորումով։ Գրքի ձեւաւորումը, կարելի է ասել, մեղանում նո՛ր է առաջ եկել



որպէս մասնագիտութիւն. զրքի Ֆորմատը, չրիֆտի ընտրութիւնը, համապատասխան արտաքինը, ինչպէս եւ կազմն ու Ֆորդացը դուրս բերել ներդաշնակ՝ զրքի նիւթին եւ բովանդակութեան, այդ աշխատանքների կատարումը մեր Պետհրատի վարչութիւնը իրաւացիօրէն վստահել է Պաշտօնականին: Գրաֆիկական աշխատանքների մէջ իրենց կարողութիւնը փորձում են եւ մեր Երիտասարդ ուժերից Շաւարշ Յովհաննէսեանը, Ռոբերտ Պետրոսեանը, Սարգիս Ալեքսանեանը, Հայկ Մուրադեանը եւ էլի ուրիշներ, որոնք ի հարկէ զեռ լիովին չեն կերպարանաւորուել իրենց արուեստի մէջ, սակայն տալիս են խոստումներ հետագայի առաջադիմութեան: Այս Երիտասարդ արուեստագէտները զրեթէ միշտ իրենց նիւթ ընտրելով մեր յեղափոխութեան էպիգրոններից, իրենց վերջրած դժուարին թեմաները պէտք եղած ուժեղ թափով տալ չեն կարողանում եւ յաճախ իրենց գործերի որակը թուլացնում են:

— Համաձայն եմ ձեզ հետ, բայց, ներեցէք, դուք, մեծերդ որոշ չափով յանցանք ունիք այդ բանում. դուք խրախուսելով նրանց թեմատիկան, քիչ էք ուշադրութեան առնում նրանց գործերի որակը:

— Սկզբի շրջանում դուցէ այդպէս էր, սիրելի Ֆրանչո, այսպէս ասած «ոսպական կոմունիզմի» շրջանում. բայց հետագայում ոչ միայն «մեծերս» այլ եւ մեր մամուլը եւ պատասխանատու ընկերներ այդ մասին բազմիցս խօսել եւ զրել են կոտուելով «խալտուրա»յի դէմ:

— Ուրիշ կերպ էլ չէր լինի, նրանք Երիտասարդ են, նրանք կարող են զեռ եւս չհասկանալ իրենց միակողմանի ընթացքը: Նոյնը պէտք է ասել նաեւ մեր նոր սերունդի միւս նկարիչների մասին: Տես այստեղ, ահա Արմ. Զիլինգարեանի, Եդ. Սարգսեանի, Վ. Աղաբաբեանի, Ս. Յարութիւնեանի գործերը, ո՛րքան ժամանակակից, ո՛րքան հրատապ իրենց թեմաներով, նոյն իսկ իրենց կոմպոզիցիայով եւ յաջող արակտովկայով, բայց միեւնոյն ժամանակ ո՛րքան զեռ եւս անմշակ իրենց կատարումով: Նոյնպէս եւ Ս. Մանասեանի, Ա. Ստեփանեանի, Ս. Դաւթեանի քանդակային աշխա-

տանքները: Ընդունակութիւններ անհերքելի, առաջդիմութիւն, ձգտում եւ սէր դէպի իրենց գործը՝ անվիճելի, բայց ո՛րքան զեռ եւս անկատար՝ արուեստի տեսակէտից:

Ֆրանչեսկո Բիանկին նայեց իր ժամացոյցին:

— Գիտէ՞ք ինչ, մեզ քիչ ժամանակ մնաց. եկէք անցնենք թանգարանի միւս բաժինները, որպէսզի այսօր դոնէ կարողանանք վերջացնել Կուլտուր-պատմականը, փոխանակ վաղը նորից ձեզ նեղութիւն տալու՝ առաջնորդել ինձ մեր մայրաքաղաքի թանգարանները:

Մենք մտնում ենք Գրական - Պատմական բաժանմունքը:

— Այս բաժնի համար կատարող չունի՞ք:

— Ոչ, չունինք: Կատարող ունի միայն զեղարուեստական բաժինը որ ամենից հարուստ բաժինն է մեր թանգարանում. մնացած բաժանմունքներն առայժմ ազատ են պահում իրենց այդ շուկութիւնից եւ մանաւանդ որ նրանք զեռ եւս գտնում են կազմակերպական շրջանում:

— Իսկ ի՞նչ սխառնում էն այստեղ դասաւորուած նիւթերը:

— Ահա այս դահլիճում ցուցադրուած կը տեսնենք 19րդ դարի մեր դրական վերածնութեան խոշոր դէմքերի անձի եւ գործի հետ կապուած էքսպոնատներ, դասաւորուած առանձին պահարանների եւ վիտրինաների ու Այստեղ են Հ. Ալամդարեան, Մ. Թադիաթեան, Ռ. Արովեան, Ստ. Նազարեան, Մ. Նալբանդեան, Ղ. Աղայեան, Պ. Պոռչեան, Ս. Շահաղիյ, Բաֆֆի, Գր. Արծրունի, Ռ. Պատկանեան, Գ. Սունդուկեան եւ Մուրացան:

— Տեսնո՞ւմ ես, այստեղ կան իւրաքանչիւր հեղինակից ինքնաձեռագիր գրութիւններ, նամակներ, լուսանկարներ, նրանց աշխատութիւններից ձեռագիր եւ տպագրուած օրինակներ, այն չափով, ինչ չափով հնարաւոր է եղել հաւաքել այս մի քանի տարում: Ֆրանչո, տե՛ս, այս ձեռագիրը 18րդ դարի մեր նշանաւոր աշուղ բանաստեղծ Սայաթ - Նովայի խաղերի դալթարն է, իսկ այստեղ էլ, տե՛ս, 19րդ դարի մեր համբաււոր աշուղ Զիւանու ջութակն է:





Սուրէն Ստեփանեան. — «Հետախուզում»

— Իսկ այս ի՞նչ գիրք է այսպէս խնամքով պահուած, առանձին ապակու տակ:

— Սա, հայերէն լեզուով ու տառերով առաջին անգամ տպագրուած գիրքն է, եւ գիտե՞ս ո՛րտեղ է տպագրուած, քո հայրենիքում եւ ծննդավայրում՝ Վենետիկ քաղաքում, 1512 թուին:

— Ի՞նչ էք ասում, երեւի շատ հազուադիւտ է:

— Այո, այո, երեւակայիր, որ այդ գիրքը ե՛ս եմ նուիրել մեր թանգարանին:

— Իսկ ժամանակակից ձեր յայտնի գրողները չունի՞ն իրենց պահարանները, կամ թանգարանի վարչութիւնն այժմեանից չի՞ հաւաքում նրանց վերաբերեալ նիւթերը:

— Ի՞նչպէս չէ. արի գնանք միւս դահլիճը, այնտեղ կը տեսնես մեր ժամանակի խոշոր գրողներից, Յովհաննէս Թումանեան, Յովհ. Յովհաննիսեան իրենց պահարաններով, ապա կը տեսնես Նար-Դոս, Իսահակեան, Դեմիրճեան, Տէրեան, Չարենց, եւ նոյն իսկ մեր նորագոյն գրողների վերաբերեալ էկսպոնատներ,

որոնք դեռ եւս նոր են կարգի բերում ու դասաւորում:

— Իսկ արխիվային նիւթեր կա՞ն այստեղ եւ հնարաւորութիւն տրու՞մ է գիտական ուսումնասիրութիւնների համար օգտագործել այդ նիւթերը:

— Ի՞նչպէս չէ, այն մի սենեակում, ուր փակ է այժմ, առանձին պահարանների եւ արկղների մէջ պահուած են մեծ քանակութեամբ արխիվային նիւթեր մեր գրական ու գեղարուեստական անցեալ կեանքին վերաբերեալ. եւ թանգարանի վարչութիւնը, պէտք է ասել, սիրով ընդառաջում է գիտական աշխատաւորներին՝ օգտուելու այդ նիւթերից:

— Պատմական նիւթեր ալ կա՞ն այդ արխիվում:

— Վերջին դարերի պատմութեան, քաղաքական հասարակական շարժումների վերաբերեալ արխիվային նիւթերը դառնում են Պետական Արխիվում, իսկ այստեղի նիւթերը պատկանում են պատմութեան այն բնագաւառին, որն աւելի ընդգրկում է մեր մտաւոր կուլտուրայի հետ կապուած խնդիրները. գրականու-



թիւն, Էրաժշտութիւն, Թատրոն, գրչութեան արուեստ, մանրանկարչութիւն եւ այլն:

— Ուրեմն ձեր այնքան հոշակուած միջնադարեան մանրանկարչութիւնն էլ այս թանկարանումն է:

— Ոչ, նա, մեծագոյն չափով, դառնում է իջմիածնի թանկարանում. այստեղ միայն նրմուշներ ունինք հայ մանրանկարչութեան տարբեր դարերի ու շրջանների մասին մեր այցելուներին դադափար տալու համար:

Մենք մօտենում ենք մանրանկարների դարակներին:

— Միբերի Թրանչեսկո, տեսնում եմ դու առանձին հետաքրքրութիւն ես ցոյց տալիս դէպի մեր մանրանկարչութեան արուեստը. թոյլ տուր ես մի քանի խօսքով ծանօթացնեմ նրա պատմութիւնը: Մեր միջնադարեան նրկարչութեան մէջ այս ճիւղը շատ աւելի բարձր դարգացումի է հասել քան, օրինակի համար, որմանկարչութիւնը, Փրեսկները: Պատկերամարտների կուսակցութիւնը Հայաստանում ուժեղ է եղել և Հայոց Եկեղեցին, հակառակ Քաղկեդոնիկ եկեղեցու, մեծ չափով դուրս է վանել: Կրօնական պաշտամունքի առարկայ եղող պատկերները: Հայ արուեստագէտներին մնացել է, որ իրենց տաղանդը դրսևորեն գրքերի մէջ, նկարազարդելով մեծ թուով ձեռագիրներ. մեր օրերն հասած հայ նկարազարդ գրչագիրների թիւը հասնում է հազարների, սկսած Ծրդ դարից մինչև 18րդի կէսերը. այդ գրչագիրներով ամենից հարուստը իջմիածնի թանկարանն է, ապա Երուսաղէմի Հայոց վանքը, ապա ձեզ մօտ՝ Վենետիկ՝ Միսիթարեան Ուխտի վանքը, և վերջապէս, Արեւմտեան Եւրոպայի մայրաքաղաքների թանկարանները: Ուղղութիւնների և շրջանների տեսակէտից մեր մանրանկարչութիւնը բաժանում է երկու գլխուր հոսանքի՝ բուն Հայաստանի և Կիլիկեան շրջանի դպրոցներ: Առաջինում աւելի ինքնուրոյն՝ արեւելեան, երկրորդում նաեւ ազդեցական՝ արեւելեան ազգերի դպրոցներից. թէ՛ առաջինում և թէ՛ երկրորդում մեր մանրանկարիչները տուել են այնպիսի գլուխ-գործոցներ որոնք զարմանք եւ հիացմունք են պատճառել շատ մասնագէտ օտար գիտնականների ու նրանք առանձին մոնո-

գրաֆիաներ ունին հրատարակած այդ նիւթի մասին:

— Ահա քեզ Արեւելեան Հայաստանի դրպրոցին պատկանող մի մեծ երկհատոր մագաղաթեայ ձեռագիր, կոչւում է «Ճառքնտիր», գրուած է Մուշ քաղաքում 1202 թուին. նայիր նրա նկարներին, արեւելեան դունազեղութեան, լուսանցազարդերի և ճակատազարդերի (Փրոնտիսպիսների) ճարպիկ ոճաւորումներին: Իսկ Արեւմտեան Հայաստանում՝ Կիլիկիայում, մեր մանրանկարչութիւնն ամենից աւելի բարձր աստիճանի հասաւ 13 - 14րդ դարերում, տալով մի քանի հանճարեղ արուեստագէտներ:

— Ասացէք, խնդրեմ, յայտնի՞ են առհասարակ այդ նկարիչների անունները:

— Ի՞նչպէս չէ, եթէ արեւելեան դպրոցի մանրանկարիչներից մեզ հասել են Գրիգոր Կարնեցու, Թորոս Տարօնցու, Յակոբ Զուղայեցու անունները, իրենց պայծառ գործերով, ապա Կիլիկեան դպրոցի բազմաթիւ մանրանկարիչների մէջ ամենից աւելի փայլել են Թորոս Ռոսլինի և Սարգիս Պիծակի անունները՝ 13րդ և 14րդ դարերում: Հայ թագաւիր Փետղալները, կաթուղիկոսներն ու «արքայեղբայրները» իրենց շուրջն են հաւաքել ժամանակի լաւագոյն հայ նկարիչներին, ծաղկողներին ու ոսկողներին և մեծ դուժարներ յատկացնելով պատուիրել նրանց գրելու, ծաղկելու և ոսկելու աւտարաններ ու ճաշոցներ «իրենց հոգու փրկութեան» համար:

Թորոսի խոշոր գործերը գտնւում են Երուսաղէմում. այս թանկարանում ունենք նրա աշխատանքներից մի աւետարան գրուած 1250 թ. Կոստանդին կաթուղիկոսի պատուէրով, նուիրելու իր սանին՝ արքայազն Լեւոնին. ահա ինքը, պատանի Լեւոնը (հետագայում Լեւոն Գ. Թագաւոր) կանգնած իր փառաւոր զինուորով:

Սարգիս Պիծակը մի նորութիւն մտցրեց մանրանկարչութեան մէջ. այդ այն է, որ բացի աւանդական սովորութեամբ ճակատազարդեր ու լուսանցազարդեր նկարելուց, նա, գրքի տեքստը գրելիս, էջերի ներքեւում ազատ տեղեր էր թողնում պատկերազարդելու համար:

— Ասացէք ինձ, խնդրեմ, մանրանկարիչ-





«Անապատան», գործ՝ Տիկին Այծեմնիկ Ուրարտու Քոչարեանի

ները՝ բացի բիրտական սխեմաներից՝ ուրիշ, աշխարհիկ սխեմաներով ու թեմայով գործեր թողե՞լ են:

— Ի՞նչպէս չէ. բացի այն, որ վէպեր, պատմութիւններ են պատկերադարձել, դարին համապատասխան զգեստներով ու կենցաղային մանրամասնով, այլ և յաճախ, բիրտական մոտիվների հետ, գրքի լուսանկարներում, անուղղակի կերպով, մտցրել են իրենց ժամանակի աշխարհիկ տիպեր. բայց այդպիսի նմուշներ

այստեղ չունինք, եթէ յաջողութի մեղ գնալ էջ-միածին, այնտեղ ևս ցոյց կը տամ քեզ մի շարք ձևադիրներ՝ այդպիսի նկարներով. այժմ բաւարար համարենք. մեր ժամանակը կարճ է, մտնենք թանգարանի Ազգագրական Բաժինը:

— Գիտե՞ս ինչ, Ֆրանչեսկո, մեր Թանգարանի այս բաժինը մինչեւ հիմա դեռ իր ամբողջութեամբ բացուած չէ: Այժմ այստեղ մենք ցուցադրուած տեսնում ենք Հայաստանի դաւաններին միայն մէկը — Զանգեզուրը, մնա-



ցած գաւառների էքսպոնատները դեռ մնում են հետեւեալ փակ դահլիճում, հասարակութեան ներկայանալու պատրաստութիւնը չունենալով: Տեսնո՞ւմ ես՝ այստեղ էքսպոնատների գաստուորութիւնը կատարուած է նորագոյն սեստեմով, հասարակական շերտաւորումների կարգով: Ահա այդ գաւառի, Հին Սիւնիքի Ֆէոդալական — կղերական միջնաբերդ՝ Տաթևի վանքն իր փայտաքանդակ դռներով ու խոյակներով, նաեւ հին յետամնաց շրջանի երկրագործական գործիքների և պարագաների նմուշներ, իր հին դադգահի յետեւում նստած կտաւ գործող ծերունին, աղքատ և հարուստ կանացի ֆիգուրներ, տան սարք ու կարգ և ամանեղէններ: Ահա հին Զանգեզուրի դիպուդիտով պատկերացած գիւղերը՝ իրենց միմեանց վրայ թառած տներով, կատունների վրայի «փողոց»ներով ու հրապարակներով: Ահա և Զանգեզուրի վերակառուցուող քաղաքներն ու գիւղերը, ճիշդ է՝ շատերը դեռ ևս իրենց նախագծային փուլի մէջ:

— Այս ի՞նչ աւերակների կոյտեր են ու կործանուած գիւղերի լուսանկարներ:

— Դա տարերային մի մեծ դժբաղդութեան հետեւանքն է, սիրելի Բիանկի, Զանգեզուրի շատ գիւղեր կործանման ենթարկուեցին 1930 թուին պատահած մեծ երկրաշարժից: Բացի պետական նպատներից ու յատկացումներից, խորհրդային Միութեան հեռաւոր և մօտաւոր բաղմամբիւ վայրերից օգնութեան հասան հասարակական կազմակերպութիւններ, աշխատաւորական կոլլեկտիւիւներ ու այժմ վերանորոգւում է այդ գաւառը աւելի լաւ, աւելի կուրտուրական կերպարանքով: Ահա Ղափանի նոր յատակագիծը իր ուլլեֆ քարտէզով. տեսնո՞ւմ ես ի՞նչպէս ենք վերաշինում մենք մեր նոր քաղաքները:

— Իսկ այդ ի՞նչ է գրուած վերելում, պատտառի վրայ:

— Դա մի իմաստալից յոգունդ է, առնուած լենինի խօսքերից. շատ յարմար քանդուող հնի և վերածնունդ նորի համար:

«Յեղափոխութեան հուրի մէջ մարդիկ վերածնունդ են, այլուում է հինը եւ ծնունդ առնում նորը»:

— Ի՞նչ լաւ կը լինի, որ Հայաստանի բոլոր գաւառների համար էլ թանգարանում ունենայինք այնպիսի բաժիններ:

— Այդպէս էլ պիտի լինի, Բիանկի. մեր Լուսժողովուրդը մտահոգուած է այդ խնդրով, բայց հնարաւորութիւն չունի թանգարանին հայթայթելու պէտք եղած միջոցները արագացնելու այդ ցանկալի գործը: Թանգարանի վարչութիւնը իր նեղ միջոցներով հազիւ երբեմն էքսպոնիցիաներ է ուղարկում գաւառները կարեւոր արագութեամբ էքսպոնատներ հաւաքելու:

Մենք անցնում ենք Աղգաղբականի միւս սենեակները:

— Այստեղ, սիրելիս, դու կը տեսնես մեր հին երաժշտական գործիքների նմուշներ, այստեղ կայ հին շէնքի հաւաքածուներ, այն ինչ որ թանգարանը կարողացել է ձեռք բերել այս կարճ ժամանակում, իսկ այդ պահարանների և վիտրինաների մէջ դասաւորուած արծաթեայ զարդարանքները, գլխաւորապէս բերուած են Վանի շրջանից. Վանում արծաթագործութիւնը շատ էր զարգացած մօտիկ անցեալում և այժմ էլ նոյն վանքի վարպետները մեզ մօտ աշխատում են իրենց սիրուն ձեռարուեստով: Ահա նայիր այստեղ՝ կանացի զարդարանքներ՝ ապարանջաններ, ճակատանոցներ, գլխի թասեր, մանեակներ, սրտանոցներ, մատանիներ, ծամթելներ, ականջի, քթի օղեր, տուփեր, դօտիներ, ճարմանդներ, եւայլն, եւայլն:

— Դուք ասացիք «քթի օղեր», այդ ո՞ր դարումն են Հայուհիները կրել են այդպիսի զարդ իրենց քթերին:

— Ի՞նչ, դու կարծում ես հնութիւն են դրանք, ո՛չ, սիրելիս, անցեալ դարի երկրորդ կէսին քթի օղերը և ուտփի ապարանջանները դեռ ևս գործածութեան մէջ են եղել Վանի շրջանի Հայուհիների մէջ. և երբեմն այդ զարդերը գործածողները, հաւանական է որ դեռ ապրում են այստեղ, մեր օրերում:

— Շատ զարմանալի է, որքան պահպանողական է արեւելեցի կինը իր զոհասների մէջ:

— Այո, այդպէս է, բայց մենք չտապենք անցնել հետեւեալ բաժինները, որովհետեւ մին-





«Պոլշեվիֆ» գործ՝ Տիկ . Այծեմնիկ Ուրարտու Քոչարեանի

Հեւ թանգարանի փակուելը մեր տրամադրութեան տակ մնում է միայն մի ժամ :

Մենք դուրս եկանք միջանցք, անցնելու հանդիպակաց կողմը ուր տեղաւորուած են նոյն թանգարանի Հնագիտական և Ճարտարապետական բաժանմունքները :

— Ահա մեր Հնագիտական բաժինը . այստեղ էլ դեռ եւս գործը կազմակերպական չըջանումն է գտնուում, նոր նոր է միայն սկսուած նիւթերի դասաւորութիւնը որոշ գիտական սիստեմի վերածուել : Տեսնո՞ւմ ես այս սենեակը, Տոհմապետութեան քայքայման շրջանի նիւթեր



են ցոյց դրուած եւ նշանակուած է թէ այդ նիւթերը մեր երկրի ո՞ր դաւառումն են երեւան բերուած: Լենինականի չրջան, Ալլալեղու չրջան, Կոտայքի եւ Սեւանի չրջաններ, Արարատեան դաշտ, եւայլն:

— Իսկ աւելի վաղ դարաշրջանի էքսպոնատները:

— Աւելի վաղ, քարի դարի, բրոնզի եւ երկաթի դարերի նիւթերը պիտի դասաւորուեն այն դատարկ սենեակում, որ մենք անցանք, նրանց համար պահարանները նոր են շինուած: Այսպէս կոչուած «նախապատմական» ժամանակաշրջանին են պատկանում տեսնո՞ւմ ես, այստեղ ցուցադրուած նիւթերից այս սայլի քանդակազարդ բեկորները, Փալլուսները, նաեւ այս հիւրողիթները: Սրանք շատ հաղուադիւտ եւ թանկարժէք նիւթեր են մեր երկրի նախահայկական եւ նախախաղական հնագոյն պատմութեան համար:

— Փորձեր չեն արուած այս սայլի մնացորդներից ուստաւրացիա կատարելու:

— Այսպիսի մի փորձ արել էր մեր հնագէտներից մէկը, Եր. Լալայեանը, բայց ընդունելի չհամարուելով այժմ փորձում են նորը կազմել:

Մտնում ենք հետեւեալ սենեակը: Այս բաժնում տեղաւորուած են, ինչպէս տեսնում էք, խաղական դարաշրջանին վերաբերող նիւթեր. ծանօթ են քեզ սեպաձեւ արձանադրութիւնները. այդպիսիները Հայաստանում մինչեւ հիմայ յայտնաբերուած են 30ի չափ: Խաղուարդական պետութեան մայրաքաղաքը, երեւի գիտեա, որ Վանն էր, բայց նրանց երկրի հիւսիսային սահմաններն հասնում էին մինչեւ Սեւանայ ծովակի հարաւ եւ արեւելեան ափերը. այդ տեղերում մինչեւ հիմա էլ քարաժայռերի վրայ սնում են այս տեսակի սեպաձեւ արձանադրութիւններ: Մինչեւ վերջերս խաղիկադրութիւնը արեւելեան գիտնականների մենաշնորհն է եղել. մենք այժմ ունենք այստեղ երիտասարդ գիտնականներ, որոնք կարգում են այդ արձանադրութիւնները եւ զբաղւում են Ուրարտիայի կուլտուրայով եւ լեզուով:

— Ասացէք, խնդրեմ, ո՞րքան ժամանակ է տեւել Ուրարտական պետութիւնը:

— Համարեա երեք դարի չափ, 850-580ը մեր թուականութիւնից առաջ:

Բիւնկին հետաքրքրութեամբ նայում է պատերին ցուցադրուած ուրարտական շէնքերի, մարդկային տեսարանների նկարներին:

— Ասացէք, խնդրեմ, այս ի՞նչ շէնք է ներկայացնում այս նկարը, որ թշնամիների կողմից պաշարուած է:

— Դա Մուզասիրի տաճարի շէնքն է, Դրդ դարում Քր. առաջ. տեսնո՞ւմ ես, Ծրանչօ, Հայաստանում Փրոնտոնով սիւնադարդ շէնք եղել է այն ժամանակ, երբ դեռ չկային հին Յունաստանում ոչ Պարթենոնի եւ ոչ Ջեւսի տաճարները:

— Այո, ձեր երկիրն էլ շատ հին անցեալ ունի եւ լի է նիւթական կուլտուրայի մնացորդներով, բայց ձեր Հնագիտական թանկարանը շատ է աղքատ:

— Իրաւունք ունիս այդ նկատողութիւններն անելու, բայց ասացի քեզ սկզբից, որ մեր թանկարանը նոր է դեռ եւս. չենք հաւաքել այն ամենը, ինչ որ կարելի է հաւաքել: Բացի այդ, Հնագիտական բաժնի տրամադրութեան տակ եղած բոլոր նիւթերն էլ դեռ չեն դասաւորուած ու այցելուների համար փակ են հետեւեալ սենեակները: Ուրարտական շրջանից յետոյ այնտեղ պիտի դասաւորուեն հին Հայաստանի վերաբերուող հնագիտական էքսպոնատներ պարսկական՝ Աքեմենեան ու Սասանեան, ինչպէս Յունա-հռոմէական շրջաններից, ապա վաղ միջնադարից մինչեւ յետին դարերը: Արի քեզ կողմնակի կերպով ցոյց տամ այս դարաշրջանից թէկուզ մի քանի հետաքրքրական յուշարձաններ:

— Շատ եմ խնդրում, ցոյց տուէք:

— Ահա տեսնո՞ւմ ես այս բազալիտից խոյակները, սրանք պատկանում են Գառնիի «հեթանոսական տաճար»ին, կամ, ինչպէս ժողովուրդն է ասում, «Տրդատայ թախտ»ին. շէնքը կառուցուած է քրիստոնէական առաջին դարերում:

Միջնադարեան հայկական արուեստի դորձեր են ահա այս քանդակազարդ փայտէ խոյակներն ու դռները բերուած Սեւանի կղզուց:

— Իսկ այս ի՞նչ հսկայական կաթսայ է:



— Այդ բրոնզէ ձուլուած կաթսան կամ քոթը մի հաղուազիւտ յիշատակարան է, Հոգարծնի վանքից տարուած էջմիածին, ապա այնտեղից բերուած Երեւան: Ունի արձանագրութիւն ՈԶԱ Հայոց թուականի որ մեր թուականութեան 1232 թիւն է:

— Ունինք այստեղ նաեւ զրամադիտական ենթարածին, ուր ցուցադրուած կը տեսնես Պարթեական, Սասանական, Հռովմէական, Բիզանդական, Սելջուկեան եւ ի հարկէ, հայկական հին զրամաների բաւական հարուստ ժողովածուներ: Իսկ այս պահարաններն ու վիտրինները, որ դատարկ եւ տեսնում, այնտեղ դասաւորուած էին Ակադեմիկոս Մատի Անի քաղաքում տարիներ շարունակ կատարած պեղումների իրական արդիւնքները, որոնք այժմ ժամանակաւորապէս փոխադրուած են Լենինգրադ՝ Անիի ցուցահանդէսին:

— Ախոս, շատ հետաքրքրական կը լինէր նայելը. եթէ ինձ յաջողուի մի անգամ նորից զայ Երեւան, երեւի Անիի նիւթերը վերադարձած կը լինեն ու իրենց տեղերում դասաւորուած:

— Ի հարկէ, բարով դու արի երկրորդ անգամը:

— Չանցնենք ճարտարապետութեան բաժանմունքը:

— Անցնենք, բայց այնտեղ աւելի եւս քիչ բան կ'ունենաս տեսնելու, որովհետեւ մի քանի ամիս է, որ կազմուած է այդ բաժինը եւ այնտեղ այժմ միայն լաբորատորական աշխատանքներ են կատարուած:

— Բայց հայ հնագոյն ճարտարապետութիւնը շատ առատ նիւթ կարող է տալ այդ բաժնին:

Դուրս, որի վրայ գրուած է «մուտքը արգիւտու է» տկտկացնում եմ:

— Մտէ՛ք, ներսից լսում է մի թաւ ձայն:

— Արի՛, սիրելի Բիանկի, ես քեզ ծանոթացնեմ մի մարդու որ այդ բաժնի ղեկավարը եւ կազմակերպիչն է միանգամայն, բայց դեռ այդ ոչինչ, այս անձնաւորութիւնը իրենից ներկայացնում է «հայ ճարտարապետութեան պատմութիւնը» արուեստագէտ ճարտարապետ Թորոս Թորամանեան:

— Ձեր ծանոթութիւնը ինձ համար հաճելի է, ասաց Բիանկին մաքուր Ֆրանսերէնով:

Ճարտարապետը նոյնքան քաղաքավարի պատասխանեց:

— Մեծապէս շնորհակալ եմ, պարոն, խնդրեմ նստեցէք:

— Գիտէ՞ք ինչ, պարոն, շարունակեց անուանի արուեստագէտը, ես ոչինչ պիտի կարողանամ ցոյց տալ ձեզ, քանի որ մեր աշխատանքները նոր են սկսուած, մենք այժմ նրստած սենեակում աշխատում ենք հայ ճարտարապետութեան նշանաւոր յուշարձանների չափազրութիւններն ու նկարները պատրաստել ցուցադրելու համար:

— Այո, այո, տեսնում եմ, ներեցէք, որ մենք ձեզ անհանգստութիւն պատճառեցինք:

— Ընդհակառակը, ես շատ ուրախ եմ, որ հետաքրքրութիւնն է բերել ձեզ այստեղ, և ահա տեսէք մեր ներկայ աշխատանքների բնոյթը. սա իմ աշխատակցուհին է, ծանոթացէք, խնդրեմ, նկարչուհի Ա. Սաղինեան, տեսնո՞ւմ էք, նա որոշ մասշտաբով մեծացնում է ճարտարապետութեան եւ օրնամենացիայի այն մոտիվները, որ ես տալիս եմ նրան, եւ այսպէս մենք պատրաստում ենք մեր շինարարական արուեստի լաւագոյն նմուշների օրինակներ, տարբեր դարերից թանդարանի այցելուների եւ ուսումնասիրողների համար ցուցադրուող անկողնի նրանց աստիճանական զարգացումը:

— Օ՛, ի՛նչ հետաքրքրական են այս գրծումները եւ նկարները, ու ո՛րքան շնորհալի կատարուած:

— Իսկ մեր ճարտարապետութեան մոնումենտալ շէնքերի մօզէլները չենք ունենալու, ճարտարապետ, հարցնում եմ ես:

— Ինչպէս չէ, ունենալու ենք, այդ մասին թանդարանի վարչութիւնը պէտք եղած նիւթական միջոցները տրամադրելու պատրաստ է:

— Այստեղ չունի՞ք Չուարթնոցի տաճարի ձեր վերակազմութեան նկարը. եթէ դժուար չէ, բերէք թող տեսնի ընկեր Բիանկին:

— Ունինք, ամենայն սիրով:

Նա բաց է անում իր շուրջը գտնուած պահարաններից մէկը, որ լի է լուսանկարներով ու ձեռանկար օրինակներով, դուրս է բերում



Զուարթնոցի ռեստորանցիան, նրա խոյակներին ու այլ ղեկավարների նկարները եւ փոփոխական վրայ: Իմ ուղեկիցը մեծ հետաքրքրութեամբ նայում է Դրոշ դարի հայ ճարտարապետութեան հրաշալիքներից մէկին՝ եռյարկ կառուցուածքին, նրա արծուաճանդակ խոյակներին եւ հարուստ օրնամենապատկերներին:

Կէս ժամից աւելի մենք չկարողացանք մնայ ճարտարապետական բաժնի արուեստանոցում, քանի որ արդէն թանգարանի փակելու ժամանակն հասնում էր, շնորհակալութիւն յայտնեցինք Թորամանեանին եւ նրա եղբայրն աշխատակցուհուն ու դուրս եկանք միջանցք:

— Ի՞նչն էր ցած, այո՛ւ՝ ասաց Բիանկին, ծոցադրանից խոկոյն հանելով երկու սիգարետ իրեն եւ ինձ համար:

— Ո՛չ, Ֆրանչո, արի՛ մի քանի բոպէով մտնենք թանգարանի դրասենեակը, այնտեղ այցելուների զիրք ունենք, նրա մէջ ստորադրիւր, կը մնայ մեզ յիշատակ:

— Ուրախութեամբ, ամենայն սիրով:

Մտանք դրասենեակ, խնդրեցինք այցելուների ստորադրութեան գիրքը եւ սկսեցինք թերթել:

— Տեսնո՞ւմ ես, սիրելի Բիանկի, մեր թանգարանն այցելել եւ իրենց լաւ տպաւորութիւնները գրել են Ֆ. Նանսէն, Մաքսիմ Գորկի, Անրի Բարբիւս, Զիշերին, Ուկրայնի եւ Վրաց նշանաւոր գրողներ ու արուեստագէտներ, պետական քաղաքական գործիչներ:

— Բայց դուք ինձ պատիւ էք անում այս քրքի մէջ իմ համեստ ասունն էլ խառնելու այդպիսի նշանաւոր մարդկանց անուններին:

— Գրիւր, Ֆրանչո, հեռաւոր վայրերից մեր երկիրն եկած մի մասնագէտ բանուոր, որ այնքան սիրում ու գնահատում է կուլտուրական արժէքներ եւ չի ձանձրանում ժամերով ման գալ թանգարաններում, իրաւունք ունի իր անունը յիշատակելու այստեղ:

Բիանկին վերցրեց գրիչը եւ գրքի մէջ մի անկիւնում գրեց իր անունը:

Մեր գործն համարելով վերջացած, մենք դուրս եկանք թանգարանից, եւ ծուռեցինք Ռուբէնի փողոցը:

— Ասա ինձ, Ֆրանչո, ի՞նչպիսի է քո բնո-

հանուր տպաւորութիւնը մեր կուլտուր-պատմական թանգարանից:

— Վերին աստիճանի դրական. մի քանի տարւոց ոչինչից ստեղծել այսպիսի մի հոյակապ հիմնարկութիւն, դա մեծ պատիւ է բերում երկրի կառավարութեան եւ անձնուիրութեամբ աշխատող գործիչներին. միակ խոշոր պակասութիւնը, որ ես նկատեցի ձեր թանգարանում, այդ չէնքի անյարմարութիւնն էր եւ նկղում-բութիւնը:

— Այո. սա ժամանակաւոր է. թանգարանի համար կառուցուելու է մի նոր մեծ շէնք:

Մենք խօսակցելով հասել էինք Գրողների Տան գլխաւոր մուտքին. ես մի քանի բոպէով բարձրացայ ու վերադարձայ. իմ բացակայութեան ժամանակ Բիանկիի ուշադրութիւնը դրաւել էր ոչ հեռու գտնուող Հոգժողկոմատի հոյակապ շէնքը:

— Առաջէք, խնդրեմ, այս ի՞նչ շէնք է:

— Սա մեր բարձր պաշտօնատեղերից մէկին՝ Երկրագործութեան Կոմիսարիատի շէնքն է, կառուցուած ակադեմիկոս ճարտարապետ՝ Ալ. Թամանեանի նախագծով:

— Հիանալի կառուցուածք է. միանգամայն թանգարանի յարմար շէնք. ինձ թւում է, որ հայ պատմական ոճով շինուած այս տան մէջ պէտք է տեղաւորել ձեր Կուլտուր-պատմական թանգարանը. կոմիսարիատը եւ նրա յարակից հիմնարկները կարող են իրենց համար առանձին տեղ գտնել:

— Հիանալի միտք տուիւր ինձ, Ֆրանչո, ես կը գրեմ այդ մասին մամուլում, դուք էլ մեր բարձր օրգաններն ուշադրութեան անեն այդ կարեւոր խնդիրը:

— Կառք չնստե՞նք մինչեւ հիւրանոցը, յոյնած ենք կարծես:

— Վատ չի լինի...

Հիւրանոցի դռներ մենք ժամադրում ենք հանդիպելու հետեւեալ օրը եւ միասին շրջելու մեր միւս թանգարանները՝ Յեղափոխութեան Թանգարան, Տնտեսական - տեխնիկական Թոնգարան եւ Կոմունալ Թանգարան:

— Առ այժմ ցտեսութիւն, սիրելի Բիանկի: Երեսան Գ. ԼԵԻՈՆԵԱՆ

1932/33 թ.